«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ
2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՇՆԱՆԱՅԻՆ ՀՈՍՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑՈՂԻԿ ՏԵՂԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԸ, ՀԱՏՈՒԿ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԸ, ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐԸ, ԱՆՑՈՂԻԿ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՇԵՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի (**այսուհետ՝ նաև ՀՀ փաստաբանական դպրոց**) կառավարման խորհուրդը (**այսուհետ՝ Խորհուրդ**)՝ մասնակցությամբ Խորհրդի նախագահ Սիմոն Բաբայանի, Խորհրդի անդամներ՝ Լեռնիկ Հովհաննիսյանի, Լյուդվիկ Դավթյանի, Նիկոլայ Հակոբյանի և Տիգրան Խուրշուդյանի,

ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, «Փաստաբանության մասին» օրենքի 45.4-րդ հոդվածի 4-րդ մասի 7-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի կանոնադրության 57-րդ կետի 5-րդ ենթակետով և 87-րդ կետով՝ միաձայն

ՈՐՈՇԵՑ՝

1. 2022 թվականի աշնանային հոսքի՝

1.1. Առկա եղանակով դիմորդների գրավոր քննության անցողիկ տեղերի քանակական կազմը (անցողիկ տեղերը) սահմանել 93 (իննսուներեք) տեղ, այդ թվում՝

1) քրեաիրավական ուղղվածության՝ 28 (քսանութ) տեղ.

2) քաղաքացիաիրավական (վարչաիրավական) ուղղվածության՝ 65 (վաթսունհինգ) տեղ.

1.2. հեռավար (առցանց, դիստանցիոն) եղանակով դիմորդների քանակական կազմը սահմանել 20 (քսան) տեղ, որից՝

1) քրեաիրավական ուղղվածության՝ 7 (յոթ) տեղ.

31 մայիսի 2022թ.
թիվ 7/2-Լ

2) քաղաքացիաիրավական (վարչաիրավական) ուղղվածության՝ 13 (տասներեք) տեղ:

2. 2022 թվականի աշնանային հոսքի՝

2.1. Առկա եղանակով հատուկ դիմորդների քանակական կազմը (առավելագույն սահմանաքանակը) սահմանել 25 (քսանհինգ) վճարովի տեղ, այդ թվում՝

1) քրեաիրավական ուղղվածության՝ 15 (տասնհինգ) տեղ.

2) քաղաքացիաիրավական (վարչաիրավական) ուղղվածության՝ 10 (տասը) տեղ.

2.2. հեռավար (առցանց, դիստանցիոն) եղանակով հատուկ դիմորդների քանակական կազմը (առավելագույն սահմանաքանակը) սահմանել 10 (տասը) վճարովի տեղ, որից՝

3) քրեաիրավական ուղղվածության՝ 7 (յոթ) տեղ.

4) քաղաքացիաիրավական (վարչաիրավական) ուղղվածության՝ 3 (երեք) տեղ:

3. 2022 թվականի աշնանային հոսքի ունկնդիրների (բացառությամբ հատուկ դիմորդների) համար սահմանել 3 (երեք) անվճար տեղ՝ արտոնության կիրառումը վերապահելով ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենին՝ Խորհրդի սահմանած Ունկնդիրների ուսման վարձի վճարման կարգին համապատասխան (մնացած տեղերը վճարովի են):

4. 2022 թվականի աշնանային հոսքի ընդունելության գրավոր քննության անցողիկ միավորների նվազագույն շեմ սահմանել 120 (հարյուր քսան) միավորը:

5. ՈՒԺը կորցրած ճանաչել ՀՀ փաստաբանական դպրոցի կառավարման խորհրդի 17.11.2021թ. թիվ 7/5-Լ որոշման 2-րդ կետը:

ՀՀ փաստաբանական դպրոցի
կառավարման խորհրդի նախագահ՝ Սիմոն Բաբայան

31 մայիսի 2022թ.
թիվ 7/2-Լ
ք. Երևան